ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2025 թ. N 184-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ N 17/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 22-28-րդ կետերի, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 16-ի N 50-Ա որոշման, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2025 թվականի օգոստոսի 11-ի N 9 արձանագրությունը՝ ***որոշում եմ՝***

1. Հաստատել հասարակական կառուցապատման նպատակով 2025 թվականի օգոստոսի 11-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 17/2 հասցեում գտնվող 10-002-0032-0132 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման), մակերեսը՝ 700 (յոթ հարյուր) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 11-ի N 9 արձանագրությունը՝ Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 17/2 հասցեում գտնվող հողամասը 2025000 (երկու միլիոն քսանհինգ հազար) դրամով օտարել աճուրդի միակ մասնակից ***Տարոն Արմենի Վարդանյանին***:

2. Սույն որոշման առաջին կետում նշված գումարի վճարման հաշվեհամարն է՝ 900365031625:

3. Տարոն Արմենի Վարդանյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տարոն Արմենի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2025 թ. N 185-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ 10-016-0201-0002, 10-016-0201-0003, 10-016-0235-0003, 10-016-0235-0002, 10-016-0208-0023, 10-016-0201-0005 ԵՎ 10-016-0228-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 22-28-րդ կետերի, Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 24-ի N 63-Ա, 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ա, 2025 թվականի փետրվարի 20-ի N 15-Ա և 2025 թվականի հունիսի 16-ի N 50-Ա որոշումների, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2025 թվականի օգոստոսի 11-ի N 10 արձանագրությունը՝ ***որոշում եմ՝***

1. Հաստատել գյուղատնտեսական գործունեության նպատակով 2025 թվականի օգոստոսի 11-ին կայացած Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 10-016-0201-0002, 10-016-0201-0003, 10-016-0235-0003, 10-016-0235-0002, 10-016-0208-0023, 10-016-0201-0005 և 10-016-0228-0024 կադաստրային ծածկագրերով հողամասերի, ընդհանուր մակերեսը՝ 2,753725 (երկու ամբողջ յոթ հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր քսանհինգ միլիոներորդ) հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն աճուրդով վաճառելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 11-ի N 10 արձանագրությունը՝ N 4 լոտով աճուրդի հանված 10-016-0201-0002, 10-016-0201-0003, 10-016-0235-0003, 10-016-0235-0002, 10-016-0208-0023, 10-016-0201-0005 և 10-016-0228-0024 կադաստրային ծածկագրերով հողամասերը 1195000 (մեկ միլիոն հարյուր իննսունհինգ հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Մխիթար Վիլսոնի Մարգարյանին***:

2. Սույն որոշման առաջին կետում նշված գումարի վճարման հաշվեհամարն է՝ 900365031625:

3. Մխիթար Վիլսոնի Մարգարյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասերի առուվաճառքի պայմանագրեր:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մխիթար Վիլսոնի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025 թ. օգոստոսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2025 թ. N 186-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՐԱՅՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՈՒ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նորայր Խաչատրյանի հայտը (մտից՝ N 1210, 2025 թվականի օգոստոսի 6)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Նորայր Խաչատրյանին տալ 2025 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 2 շենքին կից գտնվող հասարակական նշանակության տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման ու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություններ (Թույլտվություն N 61 և N 62):

2. Անհատ ձեռնարկատեր Նորայր Խաչատրյանին պարտավորեցնել վճարելու տեղական տուրք Ջերմուկի համայնքապետարանի

ա/ 900365031435 հաշվեհամարին՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ եռամսյակի հաշվարկով,

բ/ 900365031336 հաշվեհամարին՝ 9750 (իններ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի համար՝ եռամսյակի հաշվարկով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Նորայր Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի յուրաքանչյուր տեսակի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025 թ. օգոստոսի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2025 թ. N 187-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՂԱԲԱԺՆԻ ՉԱՓԻՑ ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թ. դեկտեմբերի 31-ին ընդունված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետերի պահանջներով, հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Գ. Ժ. Թադևոսյանի դիմումը (մտից N 1252, 13.08.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Հիմք ընդունելով Գնդեվազ համայնքի Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 10.04.1991 թ. N 7 որոշումից 01.02.2002 թ. տրված քաղվածքը՝ Գալուստ Ժորայի Թադևոսյանին (անձնագիր՝ AS 0322014) սեփականաշնորհված 1,31 հա հողամասի հողաբաժնի չափից մինչև 20 % ավել օգտագործվող 0,19035 հա բնակելի կառուցապատման հողամասը (հասցեն՝ Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, 1-ին փողոց N 5, չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանք՝ 2024BBWDR9) սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Գալուստ Ժորայի Թադևոսյանին և ճանաչել նրա սեփականության իրավունքը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված 0,19035 հա հողակտորը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2025 թ. N 188-Ա

ԱՐԳԻՇՏԻ ՋԱՎԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼՃԱԿԻ ՋՐԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 21-ի N 59-Ա որոշման և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Արգիշտի Հովհաննիսյանի՝ ս/թ օգոստոսի 14-ի դիմումը (մտից՝ 2025 թվականի օգոստոսի 14-ի N 1255)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող արհեստական լճակի ջրային մակերևույթը (այսուհետ՝ լճակ) լաստ-սրճարանի գործունեության կազմակերպման նպատակով օգտագործման թույլտվություն տրամադրել անհատ ձեռնարկատեր Արգիշտի Ջավենի Հովհաննիսյանին:

2. Սահմանել, որ Արգիշտի Ջավենի Հովհաննիսյանը պարտավոր է՝

ա/ Ջերմուկի համայնքապետարանի 900365031088 հաշվեհամարին լճակի օգտագործման յուրաքանչյուր ամսվա համար վճարել 70 000 (յոթանասուն հազար) դրամ,

բ/ երաշխավորել լճակի մաքրության պահպանումը լաստ–սրճարանի շահագործողների և այցելուների կողմից:

3. Արգիշտի Ջավենի Հովհաննիսյանի հետ կնքել լճակի օգտագործման երկկողմ պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արգիշտի Ջավենի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2025 թ. N 189-Ա

«ՍՏԱՐՏ-ՆԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Ջերմուկ համայնքի և «ՍՏԱՐՏ–ՆԵՏ» ՍՊ ընկերության միջև 05.08.2024 թ. կնքված Գույքի վարձակալության պայմանագրի 7.3–րդ կետի, հաշվի առնելով «ՍՏԱՐՏ–ՆԵՏ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Մարգարյանի դիմումը (մտից 1110, 17.07.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Կողմերի համաձայնությամբ, վաղաժամկետ լուծել Ջերմուկ համայնքի և «ՍՏԱՐՏ–ՆԵՏ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի օգոստոսի 5-ին կնքված Գույքի՝ օպտիկամանրաթելային մալուխների անցկացման նպատակով Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Կեչուտ գյուղում գտնվող թվով 40 (քառասուն) հենասյուների վարձակալության պայմանագիրը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը լուծված համարել 2025 թվականի օգոստոսի 1-ից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2025 թ. N 190-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՈՒՐԳԵՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր և տեղական վճարների արտոնություններ սահմանելու մասին» N 76-Ն որոշման և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Գուրգեն Լենիկի Ավագյանի դիմումը (մտից՝ 2025 թվականի օգոստոսի 20-ի N 1285)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ քաղաքի բնակիչ Գուրգեն Լենիկի Ավագյանին Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականի հունիսի 28-ին տրված N 6 շինարարության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել չորս ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը:

2. Գուրգեն Լենիկի Ավագյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 240000 (երկու հարյուր քառասուն հազար) դրամ՝ տեղական տուրք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Լենիկի Ավագյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թ. N 191-Ա

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՂԱԲԱԺՆԻ ՉԱՓԻՑ ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Անահիտ Հայկի Հովհաննիսյանի դիմումը (մտից՝ N 1261, 14.08.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Երևան քաղաքի բնակիչ Անահիտ Հայկի Հովհաննիսյանի ընտանիքին սեփականաշնորհված սեփականաշնորհված 0,15 հա հողամասի հողաբաժնի չափից մինչև 20 % ավել օգտագործվող 300 քմ բնակելի կառուցապատման հողամասին (չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանք՝ 2025DKMKXZ) տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, 17-րդ փողոց N 4/1:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թ. N 192-Ա

ՎԱՐԴԳԵՍ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ԺԻՐԱՅՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 114-րդ հոդվածի, 275-283-րդ, 219.1-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով Գնդեվազ գյուղի վարչական ղեկավարի՝ ս/թ օգոստոսի 8-ի զեկուցագիրը (մտից N 1225) և Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ ս/թ օգոստոսի 11-ի N 180-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթի շրջանակում Ջերմուկի համայնքապետարանի վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսից 22-ի N 1 արձանագրությունը և հանձնաժողովի նախագահ Ա. Խաչատրյանի զեկուցագիրը (մտից N 1293)՝ ***որոշում եմ՝***

1. Համայնքի տարածքում՝ արգելված վայրում անասուններ պահելու (արածեցնելու) համար Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչներ Վարդգես Զավենի Մկրտչյանի և Ժիրայր Հայկազի Մկրտչյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 114-րդ հոդվածի հատկանիշներով նշանակել վարչական տուգանք՝ 10000–ական (տաս հազարական) դրամի չափով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված քաղաքացիները պարտավոր են սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Ջերմուկի համայնքապետարանի 900365031187 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Ջերմուկի համայնքապետարանի վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովին:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետում նշված քաղաքացիներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թ. N 193-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 81-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N 183–Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 11-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 81-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման 1-ին կետում «2025XMNWGE» ծածկագիրը փոխարինել «20258AZDEA» ծածկագրով:

2. Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 69-րդ և 70-րդ հոդվածներին համապատասխան՝ հիմք ընդունելով աճուրդը չկայացած համարելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 21-ի N 13 արձանագրությունը և հաշվի առնելով այն, որ 2025 թվականի օգոստոսի 11-ին հիշյալ հանձնաժողովի կողմից հայտարարված աճուրդի ժամանակ հաղթող ճանաչված անձը՝ Գրեսիկ Սուրիկի Հովհաննիսյանը, օրենքով սահմանված ժամկետում գումարն ամբողջությամբ չի վճարել՝ Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի N 19 հասցեում գտնվող հողամասի աճուրդը համարել չկայացած և ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 11-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի N 19 հասցեում գտնվող հողամասի հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու մասին» N 183-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2025 թ. N 194-Ա

ՍԵՎԱԿ ԷԴԻԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ N 27/2 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածով, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, 21-րդ հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 77-Ն որոշումը և հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Սևակ Էդիկի Համբարձումյանի դիմումը (մտից N 1303, 25.08.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Սևակ Էդիկի Համբարձումյանին թույլատրել Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 27/2 բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ շենք) սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող տանիքին տեղադրելու արևային կայան:

2. Սևակ Էդիկի Համբարձումյանը պարտավոր է՝

ա/ Ջերմուկի համայնքապետարանի 900365031112 հաշվեհամարին վճարելու 25 000 (քսանհինգ հազար) դրամ տեղական վճար՝ համայնքի վարչական տարածքում գտնվող, այդ թվում՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող շենքերի, շինությունների տանիքներին արևային կայանների տեղադրման թույլտվության տրամադրման համար,

բ/ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տանիքի հատվածը օգտագործել բացառապես սույն որոշման 1-ին կետում նշված նպատակային նշանակությանը համապատասխան, չխոչընդոտել շենքի ինժեներային կոմունիկացիաների, մեխանիկական և այլ սարքավորումների բնականոն գործունեությանը, չխոչընդոտել կամ վնաս պատճառել շենքի մյուս սեփականատերերին՝ իրենց շինությունները տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու ժամանակ:

3. Սահմանել, որ շենքի տանիքին արևային կայանի անվտանգ տեղադրման և շահագործման ողջ պատասխանատվությունը կրում է Սևակ Էդիկի Համբարձումյանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սևակ Էդիկի Համբարձումյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2025 թ. N 195-Ա

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊՈՄՊԱԿԱՅԱՆՆԵՐ ԵՎ ՋՐԱՏԱՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ն որոշման, հաշվի առնելով «Լիդիան Արմենիա» ՓԲԸ տնօրեն Հ. Ալոյանի դիմումը (մտից՝ 2025 թվականի օգոստոսի 26-ի N 1310)՝ ***որոշում եմ***՝

1. «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 10-016-0227-0008 կադաստրային ծածկագրով հողամասում պոմպակայանների և ջրատարի կառուցման շինարարության թույլտվություն:

2. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2025 թ. N 196-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,13108 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքում գտնվող 0,13108 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ այլ, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025GNHR3S:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2025 թ. N 197-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,25097 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի գտնվող 0,25097 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025DTJJLS:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Սայաթ Նովայի փողոց N 48:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 27
Ջերմուկ